ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատման համակարգը պետք է ապահովի ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը, իսկ բողոքարկումը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման վերանայմանը: Ուսանողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումը պետք է լինի առավելագույնս հստակ ու թափանցիկ: Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել և ծանոթացնել դասընթացի գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին: Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատման և գնահատականի բողոքարկմանն ուղղված իր իրավունքներին և պարտականություններին: Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար Քոլեջում սահմանվում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Քոլեջում գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի ավարտին (կիսամյակային), ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ), պետական ավարտական քննություններ հանձնելիս (հանրակրթական առարկաներից՝ հիմնական ընդհանուր կրթության հիմքով սովորողների համար), մոդուլի ամփոփման դեպքում (ամփոփիչ մոդուլային), ուսումնառության ավարտին (պետական որակավորման քննություն):

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումներն իրականացվում են դասախոսի կողմից՝ ըստ ուսումնական մոդուլների և առարկաների, գրանցվում են դասամատյանում, այնուհետև ամփոփագրում:

Կիրառվում են գնահատման հետևալ սանդղակը

Միավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Քննական ամփոփագրերը կազմվում են ուսումնական մասում, վավերացվում են տնօրենի կողմից՝ հաստատության կնիքով: Քննական ամփոփագրերը տրամադրվում են դասախոսական կազմին ստուգարքի կամ քննության սկսվելուց անմիջապես առաջ և վերադարձվում են ուսումնական մաս՝ ստուգարքի կամ քննության ավարտից անմիջապես հետո:

Գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և մոդուլների գնահատման միջոցին համապատասխան: Մոդուլների գնահատման արդյունքում ընդունվում է վերջնական որոշում՝ «անցել է» կամ «չի անցել», գնահատման գործընթացների շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքը կարող է ստանալ որոշակի միավոր ըստ նախապես սահմանված սանդղակի:

Քննությանը ուսանողը պարտավոր է ներկայանալ ստուգման գրքույկով, և տվյալ դասընթացի դասախոսը պատասխանատվություն է կրում ստուգման գրքույկի և քննական ամփոփագրի գրանցման համապատասխանության համար:

Բանավոր քննությունները գնահատելիս կիրառվում է գնահատման հետևյալ սանդղակը

Միավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Գրավոր քննությունները գնահատելիս կիրառվում է գնահատման հետևյալ սանդղակը

Միավոր	Անվանում
20	«բացառիկ»
19	«գերազանց»
18	«գերազանց »
17	«լավ»
16	«լավ»
15	«լավ»
14	«լավ»
13	«բավարար»
12	«բավարար»
11	«բավարար»
10	«բավարար»
9	«բավարար»
8	«բավարար»
7	«անբավարար»
6	«անբավարար»

5	«անբավարար»
4	«անբավարար»
3	«անբավարար»
2	«անբավարար»
1	«անբավարար»

Ստուգումների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ուսումնական մասը և համապատասխան ամբիոնը:

Ուսումնական պլանով նախատեսված քննության համար մշակվում են քննական թեստեր կամ հարցաշարեր՝ համաձայն ծրագրային թեմաների: Հարցաշարերի հիման վրա կազմվում են հարցատոմսեր, որոնք վավերացվում են համապատասխան ամբիոնի վարիչի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից, իսկ ավարտական և պետական որակավորման քննությունների թեստերն ու հարցատոմսերը վավերացվում են տնօրենի կողմից՝ հաստատության կնիքով և պահվում են ամբիոններում:

Պետական որակավորման քննությունների հարցաշարերը կազմվում և ուսանողներին են տրամադրվում ոչ ուշ, քան քննությունից երկու ամիս առաջ, իսկ ընթացիկ քննություններինը՝ մեկ ամիս առաջ:

Քննական թեստերը և տոմսերը կազմվում են ամբիոնում և ներկայացվում հաստատման քննաշրջանի մեկնարկից տասն օր առաջ:

Քննությունների անցկացման ձևի և բովանդակության ցանկացած փոփոխություն պետք է քննարկվի ամբիոնում և առաջարկը հաստատելու կամ մերժելու համար ներկայացվի Կառավարման խորհուրդ:

Գիտելիքի գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) մոդուլի (առարկաների) արդյունքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում,

բ) ամբողջ մոդուլի (առարկայի) եզրափակիչ գնահատում, ինչը ենթադրում է դասընթացի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում:

Եթե ուսանողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները համապատասխանում են չափորոշչով սահմանված պահանջներին, նրանք գնահատվում են դրական՝ ըստ իրենց ցուցաբերած մակարդակի, եթե չեն բավարարում վերոնշյալ պահանջներին կամ մասամբ են բավարարում, նրանք պետք է զարգացնեն իրենց հմտություններն ու կարողությունները, որից հետո դիմեն կրկնակի գնահատման:

Եզրափակիչ գնահատումն իրականացվում է դասընթացի ավարտին՝ ամփոփիչ գնահատականների և քննությունների գնահատման միջոցով:

Գնահատման կարգի և արդյունքների մասին դասախոսը տեղեկացնում է սովորողին:

Կիսամյակային քննությունների կազմակերպումը, գնահատումը և բողոքարկումը,

Քննությունների ժամանակացույցերը կազմվում են ուսումնական մասի կողմից և հաստատվում տնօրենի կողմից:

Քննությունների ձևերը, հարցաշարերը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (քննաշրջանի մեկնարկից մեկ ամիս շուտ):

Հանրակրթական առարկաներից տրվող ամփոփիչ գրավորները տրվում են դասախոսի որոշած ձևով, իսկ մոդուլների արդյունքների ամփոփումները կատարվում են դասախոսի կողմից տրված գնահատման թերթիկներում՝ ըստ ծրագրային գնահատման միջոցի:

Բանավոր քննությունների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի նույն պահին, առանց լսարանը լքելու բողոքարկել գնահատումը, անհամաձայնության դեպքում պետք է դիմի տնօրենին:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Քոլեջում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվում է կամ դասավանդող դասախոսի, կամ հանձնաժողովի կողմից: Գիտելիքների ստուգման համար նախատեսված են որոշակի չափանիշներ:

- Ոչ քննական առարկաներից գիտելիքների ամփոփումն իրականացվում է ընթացիկ գնահատականների հիման վրա՝ 10-ը միավորանոց համակարգով:
- Քննական առարկաների համար նախատեսվում է քննություն, որն անցկացվում է գրավոր (20-ը միավորանոց համակարգով) կամ բանավոր՝ (10-ը միավորանոց համակարգով):
- Մոդուլների արդյունքների կատարման համար հիմք է հանդիսանում մոդուլային ծրագրերում ներառված գնահատման կարգը:
- Արդյունքների միջանկյալ ստուգմանը չմասնակցած ուսանողներին թույլատրվում է մեկ շաբաթվա ընթացքում հանձնել արդյունքը:
- Չառաջադիմող, հարգելի բացակայություն, անբավարար գնահատական ունեցող ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապունքներ՝ ըստ ժամանակացույցի՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում, որից հետո կազմակերպվում է պարտքերի մարման շրջան՝ երկու շաբաթ:
- Եթե ուսանողը չի մասնակցել պրակտիկային և չի առաջադիմել, ստանում է անբավարար գնահատական, որը վերահանձնման ենթակա չէ:
- Յորաքանչյուր առարկան թույլատրվում է հանձնել ոչ ավելի, քան երեք անգամ (քննաշրջանի և պարտքերի մարման 2 փուլ):
- Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, ով տվյալ կիսամյակում բոլոր մոդուլներից (առարկաներից) ստացել է գերազանց գնահատական:
- Եթե ուսանողը հավակնում է գերազանցության դիպլոմի, ապա նրան թույլատրվում է նախավերջին կիսամյակի պարտքերի վերահանձնման

ժամանակաշրջանում վերահանձնել ուսումնական պլանով նախատեսված մեկ առարկա/մոդուլ:

- Գերազանցության դիպլոմը շնորհվում է այն ուսանողներին, որոնց բոլոր մոդուլների (առարկաների) ամփոփիչ գնահատականները համապատասխանում են «լավ» և «գերազանց» գնահատականներին, ընդ որում՝ «լավ» գնահատականի քանակը չի գերազանցում 25 տոկոսը և պրակտիկաներից, պետական ավարտական քննություններից և պետական որակավորման քննությունից կամ ավարտական դիպլոմային աշխատանքի պաշտպանությունից ստացել են գերազանց գնահատական:

4. ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Քոլեջում ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է համաձայն ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն և 2021 թվականի ապրիլի 5-ի N 254-Ն հրամաններով հաստատված կարգերով: Պետական ամփոփիչ ատեստավորման նպատակն է գնահատել սովորողի համապատասխանության աստիճանը տվյալ մասնագիտության չափորոշչով սահմանված պահանջներին:

Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ուսումնական մոդուլների (առարկաների) համալիր քննության կամ դիպլոմային աշխատանքի արդյունքում:

Պետական ամփոփիչ ատեստավորման գնահատականները ենթակա են բողոքարկման դրանք հայտարարելուց անմիջապես հետո, որի համար կազմվում է առանձին արձանագրություն:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողի կողմից գրագողության փորձ անելու դեպքում չեղյալ են համարվում քննական տետրում կատարած գրառումները:

Ուսանողը բողոքարկման իրավունք ունի.

1. Եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է, եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհստակություն:
2. Գնահատականով չբավարարված ուսանողը կարող է դիմել ուսումնական մաս՝ իրգիտելիքները հավելյալ գնահատելու խնդրանքով:
3. Գրավոր քննության դեպքում յուրաքանչյուր ուսանող, բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո:
4. Բանավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող առանց լսարանից դուրս գալու, իրավունք ունի խնդրել քննասենյակ հրավիրել ուսումնական մասի աշխատակցին (կամ պատասխանատուին) և տվյալ ամբիոնի վարիչին՝ գնահատման վերաբերյալ բողոքարկումը ներկայացնելու համար:
5. Բողոքարկման դեպքում տնօրենի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով, որը նորից ստուգում է ուսանողի աշխատանքը և լսում ուսանողի կողմից դասընթացին վերաբերող թեմաների ներկայացումը:
6. Բողոքարկման արդյունքում կատարված գնահատումը հանձնաժողովի կողմից պետք է լինի օբյեկտիվ և թափանցիկ: Գնահատականը կարող է ինչպես բարձրացվել, այնպես էլ իջեցվել կամ թողնվել առանց փոփոխության:
7. Հանձնաժողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է: Այն նշանակվում է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական թերթին, հավելյալ նշում է կատարվում ստուգման գրքույկում: Կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն, որը կցվում է ամփոփագրին:
8. Բողոքարկումը չեղյալ է համարվում, եթե.

- Այն հակասում է □Քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգին□

- Ուսանողի կողմից ներկայացվում է չհիմնավորված պատճառաբանություն իր առողջական վիճակի վերաբերյալ: